Հավելված N 492
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գիտելիքահենք տնտեսության վարչության (այսուհետ՝ Վարչության) հետազոտությունների և վերլուծությունների բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.20-Մ2-3)

1.2. Ենթակա եւ հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան,Միեր Մկրտչյան 5

2. ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները և պարտականությունները

1. իրականացնում է ստեղծարար գործունեությունը Հայաստանում խթանելու և խրախուսելու համար անհրաժեշտ հետազոտությունների և վերլուծությունների իրականացման աշխատանքները.

2. իրականացնում է Հայաստանում ստեղծարար գործունեությանը խոչընդոտող հանրային և մասնավոր ոլորտներում առկա խնդիրների վերհանումը, ուսումնասիրությունը, առաջարկությունների նախապատրաստումը և ներկայացումը համապատասխան պետական մարմիններին և գերատեսչություններին.

3. իրականացնում է Հայաստանում գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ էկոհամակարգի ձևավորման և զարգացման նախագծման (պլանավորման) և աջակցման աշխատանքները.

4. մասնակցնում է Հայաստանում գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ կադրերի և մասնագետների պատրաստման ու կրթական (այդ թվում մասնագիտական կրթության և ուսուցման) ծրագրերի մշակման աշխատանքներին և օժանդակում դրանց իրականացմանը.

5. իրականացնում է Հայաստանում ստեղծարար գործունեության խթանման և խրախուսման առաջարկությունների պատրաստման աշխատանքները.

6. իրականացնում է համագործակցությունը հայ հանրության, Հայաստանի և սփյուռքի մասնագետների, ինչպես նաև արտերկրյա կամ միջազգային կառույցների, Հայաստանի հանրային, պետական մարմինների, գերատեսչությունների և կազմակերպությունների, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, բուհերի և նրանց ներկայացուցիչների հետ ստեղծարար գործունեության համար խոչընդոտներ հայտնաբերելու և լուծումներ առաջարկելու նպատակով.

7. իրականացնում է վարչության ծրագրերի ու միջոցառումների մշակման աշխատանքները.

8. իրականացնում է Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պահպանության և պաշտպանության, գիտելիքահենք տնտեսության համար անհրաժեշտ քաղաքականության ինստիտուտների, ենթակառուցվածքների և վերջիններիս արդյունավետության դիտանցման աշխատանքները.

9. իրականացնում է նպատակային (այդ թվում կրթական ծրագրերի, կադրերի պատրաստման, տնտեսության թվայնացման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման, զարգացման) և այլ ծրագրերի ու միջոցառումների նախաձեռնման, մշակման, համակարգման և դրանց դիտանցման աշխատանքները.

10. իրականացնում է տնտեսություն-գիտություն-կրթություն կապերի և համագործակցության ամրապնդմանը աջակցելու աշխատանքները՝ համագործակցելով շահագրգիռ պետական մարմինների, գերատեսչությունների և մասնավոր ոլորտի հետ.

11. իրականացնում է մասնագիտական աշխատանքային խմբերի, հանձնաժողովների և խորհրդատվական մարմինների ստեղծման աշխատանքները՝ ներգրավելով պետական մարմինների և մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ Հայաստանից և արտերկրից.

12. իրականացնում է գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության ակտիվացման և հնարավոր դոնորների հետ ծրագրերի կազմման աշխատանքները.

13. իրականացնում է կառուցողական համագործակցություն, երկխոսություն և շփումներ ստեղծարար հայ հանրության, Հայաստանի և սփյուռքի մասնագետների, ինչպես նաև արտերկրյա կամ միջազգային կառույցների, Հայաստանի հանրային, պետական մարմինների, գերատեսչությունների և կազմակերպությունների, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, բուհերի և նրանց ներկայացուցիչների հետ:

Իրավունքները.

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կամ նյութեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական ոչ առևտրային կազմակերպություններից, հիմնադրամներից, տեսչություններից, հանձնաժողովներից և այլ մարմիններից ու գերատեսչություններից.

- մասնակցել խորհրդակցությունների և քննարկումների մասնավոր ոլորտի ներկայացուցիչների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնադրամների, տեսչությունների, հանձնաժողովների և այլ մարմինների ու գերատեսչությունների ներկայացուցիչների հետ.
- մասնակցել կոնֆերանսների և գիտաժողովների, համաժողովների, սեմինարների և այլ ձևաչափով քննարկումների և միջոցառումների.
- աշխատավայրից դուրս մասնակցել հայկական և արտերկրյա մասնավոր ոլորտի կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, քննարկումներին և միջոցառումներին.
- համագործակցել հայ հանրության, Հայաստանի և սփյուռքի մասնագետների, ինչպես նաև արտերկրյա կամ միջազգային կառույցների, Հայաստանի հանրային, պետական մարմինների, գերատեսչությունների և կազմակերպությունների, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, բուհերի և նրանց ներկայացուցիչների հետ.
- համագործակցել և աջակցել Վարչության նախաձեռնությամբ ստեղծված հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի, ենթախմբերի, խորհրդատվական և այլ ձևաչափով մարմինների աշխատանքներին:

Պարտականությունները.

- կատարել անհրաժեշտ հետազոտություններ և վերլուծություններ ստեղծարար գործունեությունը Հայաստանում խթանելու և խրախուսելու ուղղությամբ և առաջարկել համապատասխան մեխանիզմներ (գործիքակազմ).
- հետազոտել, վերհանել, ուսումնասիրել Հայաստանում ստեղծարար գործունեությանը խոչընդոտող հանրային և մասնավոր ոլորտներում առկա խնդիրները, և պատրաստել առաջարկություններ դրանց նվազեցման կամ վերացման վերաբերյալ.
- ուսումնասիրել գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ էկոհամակարգի ձևավորման և զարգացման վերաբերյալ միջազգային փորձը, ներկայացնել առաջարկություններ և մշակել համապատասխան նախագծեր.
- տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ և մեթոդական օժանդակություն Հայաստանում գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ կադրերի և մասնագետների պատրաստման ու կրթական (այդ թվում մասնագիտական կրթության և ուսուցման) ծրագրերի մշակման գործընթացներում.
- հետազոտել և վերլուծել ստեղծարար գործունեության խթանման և խրախուսման վերաբերյալ միջազգային փորձը և մշակել առաջարկություններ դրանք Հայաստանում կիրառելու համար.
- հետազոտել և վերլուծել Հայաստանի և սփյուռքի մասնագետների, ինչպես նաև արտերկրյա կամ միջազգային կառույցների, Հայաստանի հանրային, պետական մարմինների, գերատեսչությունների և կազմակերպությունների, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, բուհերի և նրանց ներկայացուցիչների կողմից ներկայացված առաջարկությունները և կարծիքները ստեղծարար գործունեության համար խոչընդոտներ հայտնաբերելու և լուծումներ առաջարկելու ուղղությամբ և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

- մշակել Հայաստանում մտավոր սեփականության արդյունավետ կառավարման և առևտրայնացման ոլորտի զարգացման ծրագրեր.
- ամփոփել Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պահպանության և պաշտպանության, գիտելիքահենք տնտեսության համար անհրաժեշտ քաղաքականության, ինստիտուտների, ենթակառուցվածքների և վերջիններիս արդյունավետության դիտանցման արդյունքները, կազմել համապատասխան տեղեկատվություն և ներկայացնել բաժնի պետին.
- մասնակցել կրթական ծրագրերի, կադրերի պատրաստման, տնտեսության թվայնացման, անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման, զարգացման և այլ միջոցառումների մշակմանը և դրանց դիտանցման իրականացմանը.
- ուսումնասիրել տնտեսություն-գիտություն-կրթություն առկա կապերը, մշակել ծրագրեր և միջոցառումներ տնտեսություն-գիտություն-կրթություն համագործակցության ամրապնդման ուղղությամբ.
- աջակցել պետական մարմինների և Հայաստանի և արտերկրի մասնավոր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ մասնագիտական աշխատանքային խմբերի, հանձնաժողովների և խորհրդատվական մարմինների աշխատանքներին՝ նախապատրաստել անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություններ, զեկուցումներ, շնորհանդեսներ.
- կատարել հետազոտություններ Հայաստանում գիտելիքահենք տնտեսության զարգացման մակարդակի (այդ թվում կատարված աշխատանքների, վերլուծությունների, մոնիթորինգի, մարտահրավերների, արձանագրված խնդիրների և հնարավոր լուծումների) վերաբերյալ, արդյունքների մասին կազմել տեղեկանքներ և մշակել համապատասխան ծրագրեր հնարավոր միջազգային դոնորների հետ.
- հաստատել հետադարձ կապը ստեղծարար հայ հանրության, Հայաստանի և սփյուռքի մասնագետների, ինչպես նաև արտերկրյա կամ միջազգային կառույցների, Հայաստանի հանրային, պետական մարմինների, գերատեսչությունների և կազմակերպությունների, մասնավոր ոլորտի կազմակերպությունների, բուհերի և նրանց ներկայացուցիչների հետ:

3. ՊԱՇՏՈՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության, կամ կրթության, կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Ծրագրերի մշակում

3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1. Աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները եւ ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: